



ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԳԸ»  
ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ

Սույն ակնարկը շոշափում է «Ավ. Իսահակյանը և հայ երգը» հարցի երկու դրույթ, որոնք վերաբերում են Իսահակյանի բանաստեղծություններով հյուսված առաջին երգերի երևան գալու ժամանակին և իսահակյանական ժողովրդական երգերի կենցաղավարման պատմական մի առանձնահատկությունը: Խոսքը մասնավորապես այն երգերի մասին է, որոնց հետ կապվում է նաև երիտասարդ Կոմիտաս վարդապետի անունը:

Հայ երաժշտության մեծ դասականի նորանոր հայտնաբերվող բնագրերը շարունակ լրացնում են նրա բազմակողմանի գործունեության պատկերը: Հայտնի է դարձել, օրինակ, որ երաժշտական բարձրագույն ուսման ձեռնարկելուց առաջ, 1891—95 թվականներին, Կոմիտասն ինքնակրթությամբ ձեռք է բերել տեսական լուրջ պատրաստություն և եռանդուն զբաղվել է ստեղծագործական աշխատանքով, մշակել ու բազմաձայնել ոչ միայն գլոտդական, այլև՝ քաղաքային տարածված ու ժողովրդականացած երգերը և նրանց ոգով հորինել ինքնուրույն երգեր<sup>1</sup>: Թեև Կոմիտասի այդ տարիների երգերն իրենց ոճով դեռևս հեռու են նրա հետագա տարիների ինքնատիպ ստեղծագործություններից (դրանցում երբեմն կարելի է նկատել երաժշտի ապագա ստեղծագործական ոճի առանձին տարրեր), բայց այդ երգերում ևս հեղինակը հանդես

<sup>1</sup> Այդ ստեղծագործությունները հաճախ մի որոշ կիրառական նպատակ են ունեցել, հատկացված լինելով, սակայն թե՛ Գևորգյան ճեմարանի խմբական երգեցողությանը:

է բերել ստեղծագործական որոշակի պահանջկոտություն և հնարամտություն:

Վերջերս Մարգարիտ Բաբայանի՝ Փարիզից ուղարկված թղթերում գտանք Կոմիտասի մի անհայտ երկձայն երգը<sup>2</sup>: Խոսքեր և վերնագիր գրված չեն, սակայն եղանակը հայտնի է, հորինված է Իսահակյանի «Արևն իջավ սարի գլխուն» բանաստեղծության վրա: Նույն խոսքերով նույն եղանակը մի քանի հավելված հնչյունով և փոքրինչ տարբերակված ռիթմով զետեղված է «Ավ. Իսահակյան, Երգեր և ողբերգություններ» ժողովածուի ժողովրդական երգերի բաժնում (Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 136):

«Արևն իջավ»-ը Իսահակյանի վաղագույն բանաստեղծություններից է՝ գրված 1891 թվականին, երբ նա դեռ Գևորգյան ճեմարանում սովորում էր: Խմբերգն էլ Կոմիտասի վաղագույն աշխատանքներից է, թվական չունի, բայց կողմնակի տվյալներով կարող է վերագրվել 1892—93, ամենաուշը՝ 1894 թվականին<sup>3</sup>:

Արդյո՞ք Կոմիտասը գրի է առել մեկ ուրիշի հորինած ու տարածված եղանակը և այն հարդարել ու բազմաձայնել՝ ճեմարանում:

<sup>2</sup> Այս բնագիրը, ըստ երևույթին, կոմպոզիտորի հիվանդության տարիներին Փարիզի խմբամասար հանձնաժողովի հավաքած ձեռագրերի մեջ է եղել և պատահաբար մնացել Մ. Բաբայանի մոտ:

<sup>3</sup> Այն հանգամանքը, որ բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվել է 1893-ին, այս դեպքում էական չէ. ճեմարանի պաշտամունքում Իսահակյանի առաջին բանաստեղծություններից մեկը կարող էր ձեռագիր վիճակում ևս տարածված լինել:

բանում խմբով երգելու համար, թե, լինելով պատանի բանաստեղծի ավագ դասակիցը, հենց ինքն է երգի դրել նրա ոտանավորը:

Նման հարց ծագում է Կոմիտաս-Իսահակյան ստեղծագործական ստեղծության նաև մի երկրորդ փաստի՝ «Դարդս լացեք, սարի սմբուլ» ծանոթ երգի կապակցությամբ, որը («Դարդս լացեք»-ը) պահպանվել է Կոմիտասի 1890-ական թվականների շարադրությամբ՝ որպես ընդարձակ երգ-նոմանա<sup>4</sup>:

Այս փաստերը և՛ Կոմիտասի, և՛ Իսահակյանի ստեղծագործական կենսագրության առումով հետաքրքրական են: Առայժմ դժվար է մեր ենթադրություններից որևէ մեկը վերջնականապես հաստատել, բայց մի քանի կողմնակի տվյալներ կարծես երկրորդ ենթադրությանը հավանականության առավելություն են տալիս: Դրանք հետևյալն են. Իսահակյանն ու Կոմիտասը ճեմարանում ուսանելիս արդեն սերտ բարեկամացել էին, նրանք «տարիներ սարել էին նույն հարկի տակ, խոսել, կատակել...»<sup>5</sup>, ուրեմն, Կոմիտասը պետք է ծանոթացած լիներ Իսահակյանի բանաստեղծությանը: Այդ տարիներին ճեմարանում ընդհանրապես ընդունված էր բանաստեղծել և բանաստեղծությունները երգի դնել, 1890-ական թվականների սկզբին ինքը Կոմիտասը եղանակ էր հորինել ճեմարանական իր մի այլ դասընկերոջ բնարական ոտանավորի համար (այդ եղանակը պահպանվել է): Նույն տարիներին նա խմբերգ էր գրել նաև իր ուսուցչի՝ բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանի խոսքերով (նույնպես պահպանվել է): Ուրեմն, «Արևն իջավ» երգն էլ, ամբողջովին, կարող է Կոմիտասինը լինել:

Իսահակյանի խոսքերով հորինված մի շարք այլ երգերի նման, այս երգի կենցաղավարման ընթացքը նույնպես յուրօրինակ է եղել:

Լավատեղյակ ակնաստեսի՝ Դ. Դեմիրճյանի վկայությամբ Իսահակյանի երգերը «սկսեցին հնչել 90-ական թվականներին, հնչեցին մի անգամից, գիլ ու բարձր»<sup>6</sup>:

Այս վկայությունը կարող է վերաբերել նաև խնդրոտ առարկա երգին<sup>7</sup>: Բայց ա-

ռանձնահատուկ է այն, որ ժողովրդի մեջ տարածվել է նույն երգի խոսքերի մի այլ տարբերակ ևս<sup>8</sup>: Այդ տարբերակը բանաստեղծական վարպետության չի փայլում, սակայն, ուշադրության արժանի է, որ վերցնելով Իսահակյանի բանաստեղծության վերջին տան պատկերը («Այ ձին եկավ, անտեր եկավ»), ժողովրդական հորինողները այն զարգացրել են, յուրովի պատճառաբանել ձիու «անտեր» վերադառնալը և ոտանավորի բովանդակությունը ոչ բացահայտ, բայց որոշակի ակնարկի ձևով կապել են հայրուկային շարժմանը, վերջին հաշվով նրան հաղորդել ազգային-ազատագրական երանգ:

Նման երևույթի մասին Դեմիրճյանը հետևյալն է գրել. «Իսահակյանի երգեցիկ լիրիկան, բացի իր ժողովրդականին մոտ լեզվա-ոճական ֆակտորայից, նաև իր ստղաչափությամբ ու բնույթով զարմանալի ճկուն է եղել, փոխարինել է շատ ընդհանրացնող ժողովրդական պատմական իրոճերի, բազմազան պահանջների ծառայող հատկություն ունեցել: «Լաց, մերիկ ջան» բանաստեղծությունը, որ ըստ էության սիրային ոտանտիկա էր, դառավ հասարակական բողոքովին այլ պատկերացումների արտահայտություն: Ել այսպես մի շարք երգեր»:

Ահա, «Արևն իջավ»-ը ևս, որ սիրային ոտանտիկա է, դարձել է «հասարակական այլ պատկերացումների արտահայտություն», այն տարբերությամբ, որ այս դեպքում բնագրին կցված շարունակությամբ փաստորեն փոխվել է բանաստեղծության բնույթը:

Անհրաժեշտ է նկատել, որ ժողովրդի խոհերի ու սարյումների այդքան անմիջական արտահայտման միջոց դառնալը և ըստ այնմ՝ հորինվածքում համապատասխանորեն տարբերակվելը, ընդհանրապես հայ քաղաքային ժողովրդական երգի կենցաղավարմանը բնորոշ երևույթներից է: Անշուշտ, ամեն մի երգ չէ՛, որ արժանանում

<sup>4</sup> Այդ մասին մենք գրել ենք «Սովետական արվեստ» ամսագրի 1975 թ. № 10-ում:

<sup>5</sup> Ավ. Իսահակյանի հուշերից, Երկերի ժողովածու, հ. 4-րդ, Երևան, 1951, էջ 33:

<sup>6</sup> Վերը հիշատակված «Երգեր և ոտանաներ» ժողովածուում Դ. Դեմիրճյանի «Երկու խոսք»-ից:

<sup>7</sup> Այս ասելիս նախ և առաջ նկատի ունենք երգի պահպանվելու բուն փաստը: 1950-ական թվական-

ներին այդ երգը վերածայնագրողը՝ ԳԱ արվեստների տեսության և պատմության սեկտորի աշխատակից, երգիչ-երգահավաք, ինքն իսկ էջմիածնցի Վարդան Սահակյանը մեզ պատմում էր, որ «Արևն իջավ»-ի եղանակը նա գիտեր պատանկության տարիներից ի վեր:

<sup>8</sup> Տպագրված է հին երգարաններում. տես, օրինակ, «Գանձարան հայկական երգերու» (Գանձիր), էջ 87. վերնագրված է «Որ սիրո», խոսքերի հեղինակ հայտարարված է Ավ. Իսահակյանը, երաժշտության համար նշված է՝ «Աշուղական», թեև եղանակը աշուղական ոճ չունի:

է ժողովրդի այդպիսի արտակարգ ուշադրությանը:

Ամփոփենք.

Նորահայտ նյութերը հաստատում են, որ Ավ. Իսահակյանի խոսքերով հյուսված վահագույն երգն է՝ «Արևն իջավ սարի գլխուն», որը հորինված է 1892—93 (ամենաուշը՝ 1894) թվականներին, երբ բանաստեղծը տակավին 17—18 տարեկան էր: Դա Իսահակյանի բանաստեղծական տաղանդի արագ ճանաչման, նրա արագ ձեռք բերած ժողովրդականության արտահայտություններից է:

Իսահակյանի խոսքերով առաջին երգերի ստեղծման կամ դրանց գրառման, մշակման ու տարածման մեջ մասնակցել է երիտասարդ Կոմիտասը: Դա արվեստի բնագավառում նրանց փոխադարձ հարազատության արտահայտություններից է:

Իսահակյանի սիրային-քնարական այն երգերի թվում, որոնք իրենց ժամանակի պատմական պայմաններում փոխարինել են «ընդհանրացնող ժողովրդական պատմա-

կան իղձերի» ու «բազմազան պահանջների ծառայող հատկություն են ունեցել»,— մի կողմնակի վկայություն այդ երգերի գաղափարական-հուզական և պոետական արժանիքների մասին,— այդպիսի երգերի թվում պետք է դասել նաև «Արևն իջավ սարի գլխուն» երգը:

Ավ. Իսահակյանի «Արևն իջավ» բանաստեղծության կոմիտասյան երկնայն եղանակավորումը իր երաժշտական բնույթով հանդարտահունչ, մեղմ-քնարական, պատմողական է: Քաղաքի ժողովրդական-երաժշտական ոճով հյուսված այդ երգը Կոմիտասի վաղ շրջանի բազմաձայնության, մասնավորապես՝ նմանակման տարրեր պարունակող ազատ կոմոտրապունկտի գեղեցիկ նմուշներից է:

Ստորև՝ Ավետիք Իսահակյանի «Արևն իջավ սարի գլխուն» բանաստեղծությունը և Կոմիտաս վարդապետի համանուն խրմբերգը, որը հրապարակվում է առաջին անգամ:

Արևն իջավ սարի գլխուն,  
Դար ու դաշտում լույս չը կա.  
Հավք ու թըռչուն մըտան խոր քուն,—  
Ա՛յա, ինձ համար քուն չը կա:

Լուսնյակըն ընկավ երթկից ներս,  
Կըշեռքն ելավ երկընքում,  
Չով հովերն էլ մըթընշողես  
Աստղերի հետ են գըրցում:

Սիրո՛ւն աստղե՛ր, անուշ հովե՛ր,  
Յարըս ո՛րք է՛ էս գիշեր.  
Պարզ երկընքի նըխշուն աչե՛ր,  
Յարիս տեսա՛ք էս գիշեր:

Լուսը բացվավ, դուռը բացվավ,  
Ամպ ու գամպ է,—թոն կուգա.  
Այ ձին եկավ, անտեր եկավ,  
Ա՛յա, յարս ո՛րք է, տուն չի գա...

1891, դեկտեմբերի 4,  
Էջմիածին

ԱՐԵՎԵ ԻԶԱՎ ՍԱՐԻ ԳԼԽՈՒՆ

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍ

ՀԱՆԴԱՐՏԻԿ

[S.A.] *mp*  
 Ա-րևն ի - ջա՛վ սա-րի գ՛րԷ - խուն, գար ու  
*p*  
 [T.B.] Ա-րևն ի - ջա՛վ սա-րի գ՛րԷ - խուն

*mp*  
 դաշ-տում լույս չԸ-կա, հա՛վք ու թռչ - չուն մը-տան  
*p*  
 դար ու դաշ-տում լույս չԸ-կա, հա՛վք ու թռչ - չուն

խոր քուն, ա՛խ, ինձ հա - մար քուն չԸ - կա:  
 մը-տան խոր քուն, ա՛խ, ինձ հա-մար քուն չԸ - կա:

